ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԱՐԶԱՅԻՆ /ՏԵՂԱԿԱՆ/ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ԱՄԱՌԱՅԻՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՁՄԵՌԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N<<ՀՀ-ԱՄ-ԳԱԿ-ԾՀԱՇՁԲ-15/1-1>>

Ք. Արմավիր 28. 02. 2019թ.

ՀՀ Արմավիրի մարզպետարանը, ի դեմս Վարդան Վարդազարյանի, որը գործում է ՀՀ Արմավիրի մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Ճանշինվարպետ>> ՓԲԸ-ն ի դեմս Ընկերության տնօրեն Դ.Դավթյանի /այսուհետև Կատարող/, մյուս կողմից, հիմք ընդունելով 2015թ. Դեկտեմբերի 30-ին կնքված ՀՀ-ԱՄ-ԳԱԿ-ԾՀԱՇՁԲ-15/1-1 ծածկագրով գնման պայմանագիրը /այսուհետև Պայմանագիր/, համաձայն՝ պայմանագրի 7.3 կետի կնքեցին սույն համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը.

1.1 Կատարողը պարտավորվում է Պայմանագրով և սույն Համաձայնագրով սահմանված կարգով Պատվիրատուի հանձնարարությամբ իրականացնել Պայմանագրով նախատեսված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման պարտավորությունը /այսուհետև՝ Աշխատանքներ/ համաձայն սույն Համաձայնագրի N 1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի և Աշխատանքների արդյունքը հանձնել Պատվիրատուին, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Աշխատանքները և վճարել դրանց համար:

1.2 Աշխատանքների հանձնում-ընդունումը կատարվում է Պայմանագրով սահմանված կարգով՝ կարգի պահանջներին համապատասխան:

1.3 Սույն համաձայնագրով սահմանված պարտավորությունները տարածվում են 2019 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա և գործում են մինչև 2019թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

1.4 Դեկտեմբերի 20-31-ը կատարված աշխատանքների համար վճարումները կիրականացվեն նշված աշխատանքների համար հաջորդ տարի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը.

2.1 Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի 2019 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 28797200/ քսանութ միլիոն յոթ հարյուր իննսունյոթ հազար երկու հարյուր / ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն իրեն հանձնված Աշխատանքների դիմաց վճարում է Պայմանգրով նախատեսված կարգով՝ սույն Համաձայնագրի N 2 հավելվածին՝ ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցին համապատասխան:

## 3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում Աշխատանքների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

3.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն Համաձայնագիրը կանքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:Սույն համաձայնագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմից տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

## 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

Ք. Արմավիր, Աբովյան 71

ՀՀ Արմավիրի մարզպետարանի

գլխավոր քարտուղարի պաշտոնակատար
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

ՀՀ 900001056168

ՀՎՀՀ 04415276

Վ. Վարդազարյան

/ստորագրություն/

Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

<< Ճանշինվարպետ >> ՓԲԸ

Ք.Արմավիր, Իսահակյան 97
Ինեկոբանկ ՓԲԸ Արմավիր մ/6

ՀՎՀՀ 04400229

Հ/Հ 205032200292

Տնօրեն ———————Դ. Դավթյան

Կ.Տ. /ստորագրություն/

Հավելված 3
28.02. 2019թ.կնքված

# Գնման ժամանակացույց

հազ. Դրամ

| ը/կ | Գնման ենթակա ապրանքների, ծառայությունների անվանումը | Նախատեսվում է գնել | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1-ին եռ. | | 2-րդ եռ. | | 3-րդ եռ. | | 4-րդ եռ. | | Ընդամենը | |
| 1 | 2 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| | Ընթացիկ պահպանություն բավարար մակարդակ Տ-3-47(Հ-17-Հացիկ-Հ-17-Լուկաշին-Արմավիր)/ կմ0+ 000-կմ 1+ 400, 1.4 կմ, Տ-3-11(Հ-15-Նոր Արտագերս-Նալբանդյան-Գետաշեն-Շենավան-Նոր Կեսարիա-Մ-5) կմ0+000-կմ4+500, 4.5կմ, Տ-3-11(Հ-15-Նոր Արտագերս-Նալբանդյան-Գետաշեն-Շենավան-Նոր Կեսարիա-Մ-5) կմ14+200-կմ17+600, 3.4կմ,Տ-3-52 (Մ-5-Ամասիա-Ջանֆիդա-Արգավանդ-Հ-15) կմ9+200-կմ12+900, 3.7կմ, Տ-3-17 (Հ15-Ջանֆիդա-Թուրքիայի սահման) կմ0+000 -կմ3+000, 3.0կմ ,Տ-3-14(Մ5-Մրգաշատ-Ալաշկերտ-գ,Արմավիր-Տ-3-16) կմ0+000-կմ1+000, 1.0կմ,Տ-3-19(Արևիկ-Տանձուտ) կմ0+000-կմ3+400, 3.4կմ,Տ-3-8(Մ5-Մայիսյան-Տ-3-47) կմ10+300-կմ10+800,0.5կմ, Տ-3-58(Հ15-Այգեշատ-Տ-3-17) կմ0+000-կմ2+300, 2.3կմ, ընդամենը՝ 23.2կմ | | | 9391,6 | | 9314,3 | | 7513,3 | | 26219,2 | |
| 1 | Ձմեռային պահպանություն Արմավիրի տարածաշրջան բավարար մակարդակ Տ-3-14 (Մ-5 Մրգաշատ-Ալաշկերտ-Արմավիր-Տ-3-16) կմ 0+000-կմ 2+000, 2.0կմ, Տ-3-49 (Մ-5-Սարդարապատ-Բամբակաշատ-Ջրաշեն-Տ-3-11) կմ0+000-կմ2+500, 2.5կմ, Տ-3-17 (Հ-15-Ջանֆիդա-թուրքիայի սահման) կմ 0+000-կմ 6+000, 6.0կմ, Տ-3-47 (Հ-17-Հացիկ-Հ-17-Լուկաշին-Արմավիր) կմ 3+800-կմ 7+800, 4.0կմ, Տ-3-48 (Մ-5-Լենուղի-Այգեվան-Մ-5) կմ 3+322-կմ 6+600, 3.27կմ ընդամենը 17.77 կմ << Ճանշինվարպետ>> ՍՊԸ | 1228,0 | | | | | | 1350,0 | | 2578,0 | |
| | ընդամենր | 1228,0 | | 9391,6 | | 9314,3 | | 8863,3 | | 28797,2 | |

Պատվիրատու. Կապալառու

Հավելված 2

28.02. 2019թ.կնքված

N ՀՀ-ԱՄ-ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-1 զնման պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հազ. Դրամ

| h/h | Չեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2018թ.-ի պետական բյուջեից, ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | I եռ. | | | II եռ. | | | III եռ. | | | IV եռ. | | | Ընդամենը |
| | | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | |
| h/h | 1 | 4 | | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | |
| | Ընթացիկ պահպանություն բավարար մակարդակ Տ-3-47(Հ-17-Հացիկ-Հ-17-Լուկաշին-Արմավիր)/ կմ0+ 000-կմ 1+ 400, 1.4 կմ, Տ-3-11(Հ-15-Նոր Արտագերս-Նալբանդյան-Գետաշեն-Շենավան-Նոր Կեսարիա-Մ-5) կմ0+000-կմ4+500, 4.5կմ, Տ-3-11(Հ-15-Նոր Արտագերս-Նալբանդյան-Գետաշեն-Շենավան-Նոր Կեսարիա-Մ-5) կմ14+200-կմ17+600, 3.4կմ,Տ-3-52 (Մ-5-Ամասիա-Ջանֆիդա-Արգավանդ-Հ-15) կմ9+200-կմ12+900, 3.7կմ, Տ-3-17 (Հ15-Ջանֆիդա-Թուրքիայի սահման) կմ0+000 -կմ3+000, 3.0կմ ,Տ-3-14(Մ5-Մրգաշատ-Ալաշկերտ-գ,Արմավիր-Տ-3-16) կմ0+000-կմ1+000, 1.0կմ,Տ-3-19(Արևիկ-Տանձուտ) կմ0+000-կմ3+400, 3.4կմ,Տ-3-8(Մ5-Մայիսյան-Տ-3-47) կմ10+300-կմ10+800,0.5կմ, Տ-3-58(Հ15-Այգեշատ-Տ-3-17) կմ0+000-կմ2+300, 2.3կմ, ընդամենը` 23.2կմ | | | | 9391,6 | 9391,6 | 9391,6 | 18705,9 | 18705,9 | 18705,9 | 26219,2 | 26219,2 | 26219,2 | 26219,2 |
| 1 | Ձմեռային պահպանություն Արմավիրի տարածաշրջան բավարար մակարդակ Տ-3-14 (Մ-5 Մրգաշատ-Ալաշկերտ-Արմավիր-Տ-3-16) կմ 0+000-կմ 2+000, 2.0կմ, Տ-3-49 (Մ-5-Սարդարապատ-Բամբակաշատ-Ջրաշեն-Տ-3-11) կմ0+000-կմ2+500, 2.5կմ, Տ-3-17 (Հ-15-Ջանֆիդա-թուրքիայի սահման) կմ 0+000-կմ 6+000, 6.0կմ, Տ-3-47 (Հ-17-Հացիկ-Հ-17-Լուկաշին-Արմավիր) կմ 3+800-կմ 7+800, 4.0կմ, Տ-3-48 (Մ-5-Լեռնոտի-Այգեվան-Մ-5) կմ 3+322-կմ 6+600, 3.27կմ ընդամենը 17.77 կմ << Ճանշինվարպետ>> ՍՊԸ | | 1228,0 | 1228,0 | 1228,0 | 1228,0 | 1228,0 | 1228,0 | 1228,0 | 1228,0 | 1228,0 | 2578,0 | 2578,0 | 2578,0 |
| | Ընդամենը | | 1228,0 | 1228,0 | 10619,6 | 10619,6 | 10619,6 | 19933,9 | 19933,9 | 19933,9 | 27447,2 | 28797,2 | 28797,2 | 28797,2 |

Պատվիրատու

ք. Արմավիր, Աբովյան 71

ՀՀ Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար

Արմավիր Տ.Գ.Ը.

Հ/Հ 900001056168

ՀՎՀՀ 04415276

Կ. Վարդազարյան

Կատարող

<<Ճանշինվարպետ>> ՓԲԸ

Ք.Արմավիր, Իսահակյան 97

hh 205032200292

<<Ինեկոբանկ>> ՓԲԸ, Արմավիրի մ/ճ

հվհհ 04400229

Տնօրեն Դ.Դավթյան

Կ.Տ.